ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/125

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Էյչ Բի Էն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Մասնակցի ներկայացուցիչ՝ Բ. Գևորգյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցում, տպագրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12709-2019 գրությամբ «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1362-2019 գրության հիման վրա, 30.07.2019թ. «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 30.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 08.08.2019թ.-ին ու 16.08.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.08.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1362-2019 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնում «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում վերջինս չի ներկայացել պայմանագիր կնքելու համար: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները որոշեց մերժել «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի հայտը:»:

Միևնույն ժամանակ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները ներկայացրել են «Էյչ Բի Էն»

ՍՊԸ-ի վերաբերյալ անհարաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. <u>«Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.08.2019թ. գրությամբ դիմել է «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12709-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Ներկայանալով նշանակված նիստին Մասնակցի ներկայացուցիչը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ստանալով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը, նույն պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարել է փոփոխություն, մասնավորապես՝ բնութագրում ավելացրել է, որ պատվիրատուի կողմից պաստառների տեղադրման վայրը պետք է նախապես վարձակալված լինի վերջինիս կողմից կամ այն հանդիսանա ՀՀ պաշտպանության նախարարության սեփականությունը:

4. <u>ՍՑ-LO-2019/122 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար տպագրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը. *«ՀՀ ՋՈՒ 20 լավագույն զինծառայողներին պատկերող ցուցավահանակների տպագրություն և տեղադրում: Լուսանկարների*

աշխատանքային տարբերակները տրամադրում է պատվիրատուն, պաստառը՝ միաձույլ, 440-ից 510գր, 18 ք.մ, տպագրության խտությունը՝ 1080DPA, սարքի լայնությունը 3.2մ, տպագրության տեսակը՝ Eco-Solvent: Տեղադրման վայրը՝ ք. Երևան, ՀՀ մարզկենտրոններ և գլխավոր մայրուղիներ, ընտրվում է պատվիրատուի կողմից:»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 01.07.2019թ.-ի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից և նույն արձանագրությամբ որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 10.07.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկ:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը, սակայն պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարել է փոփոխություն, մասնավորապես՝ բնութագրում ավելացրել է, որ պատվիրատուի կողմից պաստառների տեղադրման վայրը պետք է նախապես վարձակալված լինի վերջինիս կողմից կամ այն հանդիսանա ՀՀ պաշտպանության նախարարության սեփականությունը:

Հանձնաժողովի 25.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, քննարկելով «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի կողմից գրությամբ ներկայացված պայմանագրի նախագիծը, որոշել է չհամաձայնվել առաջարկված պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարվելիք փոփոխությունների հետ, քանի որ տեխնիկական բնութագրի պայմանները սահմանված են եղել հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը հստակ սահմանում է հրավերում փոփոխություն կատարելու կարգը՝ ավելին Մասնակցի կողմից Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

հրավերի պարզաբանում չի պահանջվել և Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները չեն բողոքարկվել, իսկ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1-ով (Դիմում գնանշման հարցմանը մասնակցելու) հավաստել են, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում են հայտ, իսկ Հավելված 2-ով (Հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին) հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և քանի որ պայմանագրի կնքման ծանուցումից հետո Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ն չի ներկայացել պայմանագիր ստորագրելու համար, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12709-2019 գրությամբ «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը,

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ), պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը, զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին, իսկ 01.07.2019թ.-ի թիվ 7 արձանագրության համաձայն՝ վերջինս ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և

վճարման պահանջագիրը, սակայն պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարել է փոփոխություն, մասնավորապես՝ բնութագրում ավելացրել է, որ պատվիրատուի կողմից պաստառների տեղադրման վայրը պետք է նախապես վարձակալված լինի վերջինիս կողմից կամ այն հանդիսանա ՀՀ պաշտպանության նախարարության սեփականությունը:

Հանձնաժողովի 25.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, քննարկելով «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի կողմից գրությամբ ներկայացված պայմանագրի նախագիծը, որոշել է չհամաձայնվել առաջարկված պայմանագրի տեխնիկական բնութագրում կատարվելիք փոփոխությունների հետ և քանի որ պայմանագրի կնքման ծանուցումից հետո Մասնակիցը չի ներկայացել պայմանագիր ստորագրելու համար, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և/կամ պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Տվյալ դեպքում ընտրված/հաղթող/ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրեր պարունակող պայմանագիրը և վճարման պահանջագիրը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2019թ.-ի թիվ 26/26-1/12709-2019 գրությամբ «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Էյչ Բի Էն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**